

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ФИЗИОЛОГИИ
ВОПРОСЫ ВЫШЕЙ НЕРВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ
И КОМПЕНСАТОРНЫХ ПРИСПОСОБЛЕНИЙ

Выпуск III

1960

З. А. ШАДЖАС

ԱՐՄԵՆԱՅԻՆ ՈՒՂԵՂԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏՎԱԾ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ ՃԱԿԱՐԻ ՕՆՏՈԳԵՆԵԶԻ ՎԱՐ ԷՏԱՊՆԵՐՈՒՄ

Մեծահասակի (հասուն) կենդանիների մոտ ողնուղեղի տարրեր վնասամենքից առաջացած խանգարումները, ինչպես ցուց են ավել է. Հ. Հասրաթյանը և իր աշակերտները, ժամանակի ընթացքում վերանում են, և զերականգնվում են օրգանիզմի նորմալ ֆունկցիաները: Այդ ֆունկցիաների վերականգնման պրոցեսում կարենոր գերը պատկանում է զինուղեղի կեղեկին:

Հ. Հ. Բարսեղյանը (1950 թ.), է. Հ. Հասրաթյանը (1953 թ.), Ա. Ա. Հովհաննիսյանը և Վ. Ս. Միրզոյանը (1953 թ.), Տ. Գ. Ուրդանջյանը (1955 թ.), Լ. Ա. Մատինյանը (1950—1956 թթ.) և արիշներ իրենց հետազոտություններով հանդեցին այն կերպակացության, որ ողնուղեղի տարրեր վնասությունը առաջացած ֆունկցիաների խանգարվածությունը երիտասարդ կենդանիների մոտ անհետանում են ավելի արագ և կատարյալ, քան մեծահասակիների:

Թե ինչո՞վ է պարմանավորված խախտված ֆունկցիաների արագ վերականգնումը երիտասարդ կենդանիների մոտ, մինչեւ այժմ վերջնականացեն պարզված չէ:

Պարզված չէ նաև կենդանու զարգացման վաղ էտապներում խախտված ֆունկցիաների վերականգնման պրոցեսում զինուղեղի կեղեկ և կիսագնդերի նշանակությունը:

Հաշվի առնելով այդ հանդամանքը, մեր առջև խնդիր գրեցինք պարզել ճագարների մոտ, օնտոգենեզի վաղ էտապներում առաջնային ուղեղի նշանակությունը՝ ողնուղեղի կիսահատությունը առաջացած խանգարված ֆունկցիաների վերականգնման պրոցեսում:

Աշխատանքի մեթոդիկան

Խանգարված ֆունկցիաների վերականգնման պրոցեսի ուսումնասիրությունը ճագարների մոտ կատարել ենք խրոնիկ փորձերի օգնությամբ:

Փորձարկման ենթակա կենդանիների մոտ ինչպես մինչ վերահատումը, այսպես էլ նրանից հետո ստուգել են հետեւյալ տվյալները.

1. Կենդանու քաշը.
2. Ետեի վերջավորությունների շարժողական ներվերի խրոնաքսիան.
3. Ետեի վերջավորությունների մաշկի զերմությունը.
4. Կլնիկական դիտողությունների:

Համեմատաբար մեծ կենդանիների (15—75 օրական) վիրահատումը կատարվել է եթերալին նարկոզով քննեցնելոց հետո, իսկ փոքրերինը (1—15 օրական) կատարվել է առանց նարկոզի:

Վիրահատությունը կատարվել են ախտազորկ պարմաններում: Վիրահատման շրջանը եղել է կրծքալին 11—12-րդ ողերի սահմանը:

Ետեսի վերջավորությունների խրոնաքսիալի չափումները կատարվել են կոնդենսատորալին խրոնաքսիմետրով: Անտարբեր (ինդեֆերենտ) էլեկտրոդը թրջված աղաջրի լուծություն գրավել է կրծքառորդվայինալին պատի վրա, իսկ ակտիվ էլեկտրոդը՝ ետեսի վերջավորության ազդրալին, կամ սրունքալին ներվերի սահմանում:

Ուսումնասիրությունները տարվել են ինչպես մինչ վիրահատումը, այնպես էլ նրանից հետո: Այդ ուսումնասիրությունները տարվել են վիրահատումից մեկ ժամ անց և ավարտվել խանգարված ֆունկցիաների լրիվ վերականգնումից հետո:

Խանգարված ֆունկցիաների վերականգնումից հետո հեռացվել է կինդանիների առաջնալին ուղեղը: Այդ կատարվել է ինչպես միանվագ, այնպես էլ մաս-մաս, սկզբում հեռացվել է մեկ, ապա՝ մյուս կիսագանդը:

Փորձարկման են ենթարկվել 1—75 օրական 90 ճագար:

Ստացված արդյունքները

Երիտասարդ 1—75 օրական ճագարների ողնուղեղի միակողմանի կիսահատումը կրծքալին 11—12-րդ ողերի սահմանում առաջ է բերում շարժողական և զգացողական ֆունկցիաների մի շարք խանգարումներ, որոնք ժամանակի ընթացքում վերանում և վերականգնվում են օրգանիզմի նորմալ ֆունկցիաները:

Սուազացած խանգարումները և վերականգնման ընթացքը նկատելիորեն տարբեր են երկու հասակի կենդանիների մոտ:

1-ին հասակը ընդգրկում է 1—15 օրական ճագարներին.

2-րդ հասակը ընդգրկում է 15—75 օրական ճագարներին:

1—15 օրական ճագարների ողնուղեղի միակողմանի կիսահատումից առաջացած խանգարումներն արտահայտվում են հետեւալ կերպ՝ վիրահատումից անմիջապես հետո ողնուղեղը հատված կողմի ոտքը շարժման պրոցեսներին չի մասնակցում, բարձրանում է նրա զրագուշականությունը մեխանիկական և էլեկտրական գրդիրների նկատմամբ, իսկ հակառակ կողմի վերջավորության մոտ, ընդհակառակը, այն որոշ չափով ընկնում է:

Վիրահատումից հետո զգալի փոփոխության է ենթարկվում կենդանու կշիռը: Այդ կարելի է տեսնել 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

Ճագարների քաշը վիրահատումից առաջ և հետո (զրամներով)

Ճագարի համարը	Մառագման օրերը									Մանա- թու- թյուն	
	Մինչ վիրա- հատումը		Վիրահատումից հետո								
	1	2	1	2	3	4	8	10			
12	130	150	135	130	127	126	140	156	Հատվեց ողնու- ղեղի		
16	115	130	110	107	104	98	125	146	ողնու- ղեղի		
18	107	115	110	95	88	85	127	160	ձախ կե- ռը		
21	140	149	140	134	120	117	137	168			
43	164	175	168	162	159	157	174	196			
Կոնտրոլ	125	140	169	175	187	195	245	267		33	

Աղյուսակ № 1-ից երեսում է, որ այն ճադարները, որոնց ողնուղեղը կիսահատված է, վիրահատումից հետո, առաջին օրերին ոչ միայն չեն աճում, ալև նույնիսկ նիժարում են, այն դեպքում, եթե կոնտրոլ (ոչ վիրահատված) ճագարների քաշը պրոդրեսիվորեն աճում է:

15—75 օրական ճադարների մոտ ողնուղեղի միակողմանի կիսահատումից առաջացած խանգարումներն արտահայտվում են հնատելալ կերպ՝ վիրահատումից անմիջապես հետո հետեւ երկու վերջավորություններն էլ շարժման պրոցեսներին չեն մասնակցում: Վիրահատման հաջորդ օրվանից բարձրանում է ողնուղեղի հատված կողմից վերջավորության գրգռականությունը մեխանիկական և էլեկտրական գրգիռների նկատմամբ, իսկ հակառակ կողմից վերջավորության մոտ այն բնդիակառակը՝ որոշ չափով ընկնում է: Նկատվում է նաև, որ ողնուղեղի միակողմանի կիսահատումից հետո հատված կողմից վերջավորության մաշկն չերմությանը որոշ չափով բարձրանում է, իսկ հակառակ կողմում ընկնում է:

Արագես, № 31 ճագարի մոտ (45 օրական) նախքան ողնուղեղի վիրահատումը ետևի վերջավորությունների մաշկի շերմաստիճանը եղել է 37 աստիճան: Վիրահատման հաջորդ օրը հատված կողմից վերջավորության մոտ այն բարձրացել է մինչև 39 աստիճան, իսկ հակառակ կողմում իշել է մինչև 36 աստիճան: Վիրահատման հաջորդ օրը հատված կողմում շերմությունը բարձրացել է մինչև 40 աստիճան, իսկ հակառակ կողմում այն մնացել է անփոփոխ՝ 36 աստիճան:

4-րդ օրվանից հատված կողմից վերջավորության մաշկի չերմությունն աստիճանաբար ընկել է, իսկ հակառակ կողմում ընդհակառակը, բարձրացել:

7-րդ օրը ետևի երկու վերջավորությունների մաշկի շերմությունը գրեթե նորմալացել է:

15—75 օրական ճադարների ողնուղեղի միակողմանի կիսահատումից հետո, ի տարբերություն 1—15 օրականների, մարմնի քաշը (կոնտրոլների հետ համեմատած) զգալի փոփոխությունների չի ենթարկվել:

Վիրահատված 1—15 օրական ճադարների շարժողական և զգացողական ֆունկցիաների վերականգնումը նկատվում է ակսած վիրահատման երկրորդ օրից—ճագարները սկսում են քայլել, ըստ որում վիրահատման հակառակ կողմից ոտքը շարժումներին մասնակցում է ակտիվ ձեռվ, գետնին է դրվում նորմալ և ամուռ, իսկ վիրահատված կողմից ոտքը շարժումներին մասնակցում է թույլ և գետնին է դրվում թիկնալին մակերեսով: Վիրահատումից 4—5 օր անց ճագարներն ընդունում են նորմալ դիրք, շարժվում են առողջ կենդանիների նման, երբեմն էլ թուչկուտմ: Բրոտն-Սեկարի սինդրոմը սրանց մոտ վերանում է վիրահատումից հետո 3—4 օրվա ընթացքում:

15—75 օրական ճադարները վիրահատման 2-րդ օրից սկսած վիրահատման հակառակ կողմում գտնվող ոտքը օգտագործում են թույլ ձեռվ, իսկ 3—4 օր հետո այն զանում է լիարժեք: Ճագարը սկզբնական շրջանում վիրահատված կողմից ոտքը գետնին է դնում ոչ հաստատուն ձեռվ և թիկնալին մակերեսով, իսկ 7—8 օրից հետո նրա ֆունկցիան վերականգնվում է:

Վիրահատումից 10—11 օր անց հիշլալ կենդանիների մոտ առաջացած խանգարումներն այնքան են վերանում, որ նրանք արտաքուստ չեն տարբերվում նորմալ կենդանիներից:

Վիրահատված կենդանիների մոտ նկատվում են նաև գրգռվածության որոշ փոփոխություններ: Այն վիրահատված կողմի վերջավորություններում ընկնում է (մեխանիկական գրգիռների նկատմամբ), իսկ հակառակ կողմի վերջավորություններում՝ բարձրանում: Ետքի երկու վերջավորություններում էլ գրգռողականությունը նորմալի հետ համեմատած բարձր է լինում: Վիրահատումից 7—8 օր հետո ետքի երկու վերջավորություններում էլ գրգռողականությունը ձգտում է հասնել նախավիրահատման շրջանին:

Հետազոտությունները ցուց տվեցին, որ ողնուղեղի միակողմանի կիսահատումը ճագարների մոտ առաջ է բերում խրոնաքսիալի փափոխություններում:

Այսպես, վիրահատումից հետո հատված կողմի վերջավորության շարժող ներվի ռեորազան որոշ չափով փոքրանում է, խրոնաքսիան կարճանում, իսկ հակառակ կողմի վերջավորություննում, ընդհակառակը, ռեորազան որոշ չափով մեծանում է՝ իսկ խրոնաքսիան երկարում:

№ 61 ճագարի (32 օրական) մոտ նախքան ողնուղեղի կիսահատումը սրունքալին ներվի ռեորազան եղել է ետքի վեշավորությունների մոտ (աչ և ձախ կողմում) 5 վոլտ: Խրոնաքսիան եղել է ետքի վեշավորության աջ կողմում 0,10 միկրոֆարադ՝ ձախ կողմում՝ 0,11 միկրոֆարադ:

Ողնուղեղի ձախակողման կիսահատումից հետո հատված կողմի ռեորազան իջնում է 3 վոլտի, խրոնաքսիան 0,05 միկրոֆարադի, իսկ հակառակ կողմում ռեորազան բարձրանում է 6 վոլտի, խրոնաքսիան՝ 0,17 միկրոֆարադի:

Վիրահատումից 5 օր անց հատված կողմի ռեորազան բարձրանում է 6 վոլտի, խրոնաքսիան 0,08 միկրոֆարադի, իսկ հակառակ կողմում ռեորազան դառնում է 7 վոլտ, խրոնաքսիան՝ 0,09 միկրոֆարադ:

Վիրահատումից 8 օր հետո ետքի երկու վերջավորություններում և՛ ռեորազան, և՛ խրոնաքսիան հավասարվում են՝ ռեորազան դառնում է 5 վոլտ, խրոնաքսիան 0,10 միկրոֆարադ: Նույնանման պատկեր է ստացվել. նաև փորձարկված մլուս ճագարների մոտ:

Առաջացած խանդարումները երկրորդ, երրորդ օրվանից սկսած աստիճանաբար վերանում են և 4—5 (1—15 օրական ճագարների մոտ), 7—9 (15—75 օրական ճագարների մոտ) օրվա ընթացքում հասնում նախավիրահատման շրջանի մեծությանը:

Բերված տվյալներից երկում է, որ Բրոուն-Սեկարի սինդրոմը ողնուղեղի միակողմանի կիսահատումից հետո հանդես է գալիս ոչ միայն մեծահասակ կենդանիների մոտ, այլև օնտոգենեղի վաղ էտապներում՝ ճագարների մոտ:

Առաջնային ուղեղի հեռացումը ճագարների մոտ ողնուղեղի միակողմանի կիսահատումից հետո

Ողնուղեղի միակողմանի կիսահատումից առաջացած խանդարկած ֆունկցիաների վիրականգնումից հետո ճագարների մոտ հեռացվել է առաջնային ուղեղը (մեծ կիսագնդերը): Այն կատարվել է 3 սերիալով՝ մի խումբ ճագարների մոտ հեռացվել է միայն մեկ կիսագնդը (աչ կամ ձախ): Մյուս խմբի մոտ հեռացվել են երկու կիսագնդերը միասին:

Երրորդ խմբի ճագարների մոտ ողնուղեղի միակողմանի կիսահատման հետ մեկտեղ հեռացվել են մեկ կամ երկու կիսագնդերը:

Ուսումնասիրությունները ցուց տվեցին, որ առաջնային ուղեղի լրիվ հնապացումը ովազնդեղի միակողմանի կիսահատումից հետո ճագարների մոտ առաջ է բերում թեթևակի արտահարությած դեկոմպենսացիոն երևություններ, որոնք համեմատաբար ավելի թույլ ձեռվ են հանդես գալիս փոքր ճագարների մոտ (1—15 օրական): Այսաեղ նկատվում է նաև Բրուն-Սեկարի սինդրոմը՝ ողնուղեղի կիսահատված կողմում գրգռողականության բարձրացում, իսկ հակառակ կողմում՝ իջեցում: Անհրաժեշտ է հիշատակել, որ արդ երեսություն ալս դեպքում արտահարությած է լինում ավելի թույլ, քան այն նկատվում է ողնուղեղի միակողմանի կիսահատման պարմաններում:

Հիշալ ճագարների մոտ նկատվում է առջեկի վերջավորությունների և պարանոցի մկանների թուլացում, որն ըստ երևություն հետեւանք է մկանների տոնուսի անկման: Կիսադնդեղը հանդած կենդանիները լախ տարածում են առջեկի վերջավորությունները և չեն կարողանում ուղիղ պահել պարանոցը:

Մեծ ուղեղի կիսադնդեղից զորկ ճագարների մոտ մարմնի ընդհանուր շերմությունն ուժեղ կերպով ընկնում է: Ալբախի կենդանիների մարմնի աճը շատ ետ է մնում, չնայած այն հանդամանքին, որ նրանք միշտ սիստեմատիկաբար կիրակրվում են (տես աղյուսակ 2): Վիրահատված ճագարները առաջնային ուղեղի հնապացումից հետո ինքնուրուն սնվել չեն կարողանում:

Աղյուսակ 2

Ճագարների քաշը ողնուղեղի միակողմանի կիսահատումից ապա առաջնային ուղեղի (երկու կիսադնդեղի) հնապացումից հետո
(զրամներով)

Ճագարների համար	Մտուղման օրերը							Մանոթություն	
	Մինչ վիրահատումը		Վիրահատումից հետո						
	1	2	1	3	5	7			
13	240	247	220	193	280	170	Հանդեց	առաջնային	
16	210	227	187	175	169	155	առաջնային	ուղեղը	
21	270	285	272	260	235	217			
43	290	298	280	268	260	245			
Կոնտրոլ	305	315	350	400	407	420	Ոչ վիրահատված		

Ճագարների այն խմբի մոտ, որոնց միայն մեկ կիսադունդն է հնապացվել, կրկնված խանդաբառմներն արտահարություն են համեմատաբառ ավելի թույլ ձեռվ, քան այն նկարագրվել է երկու կիսադնդեղը հնապացված կենդանիների մոտ: Ալբախի կենդանիները կարողանում են նորմալ դիրք ընդունել, ինքնուրուն սնվել, նորմալ քայլել և ալլու նրանց մոտ մարմնի կշիռն սկզբնական շրջանում, առաջը կենդանիների համեմատառությամբ որոշ չափով հետ է մնում, բայց 5—6 օր հետո նորմալանում է:

Նշված ճագարների մոտ վիրահատումից հետո առաջին չորս օրվա ընթացքում որոշ չափով ընկնում է մարմնի ընդհանուր շերմությունը:

Արդյունքների քննարկումը

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները պարզեցին, որ կըրծքալին 11—12-րդ ողերի շրջանում ողնուղեղի միակողմանի կիսահատումը 1—75 օրական ճագարների մոտ առաջ է բերում շարժողական և զգացողական բնութիւնի մի շարք խանգարումներ, որոնք ժամանակի ընթացքում վերանում և վերականգնվում են օրգանիզմի նորմալ ֆունկցիաները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որքան երիտասարդ է կենդանին, այնքան նրա մոտ ողնուղեղի կիսահատումից առաջացած խանգարումներն արտահայտվում են թույլ ձևով և որ կարեռն է, առաջացած խանգարումները վերանում են ավելի կարճ ժամանակամիջոցում, քան այն տեղի էր ունենում հասուն կենդանիների մոտ:

Բացի այդ, ճագարների մոտ ողնուղեղի միակողմանի կիսահատումից հետո առաջանում է Բրոռն-Սեկարի սինդրոմը՝ ողնուղեղի հատված կողմի վերջավորությունում առաջանում է շարժողության անդամալուծություն և գրգռականության բարձրացում, իսկ հակառակ կողմում վերջինս իջնում է: Այս երևութը, ինչպես հայտնի է, նշվել է ոչ միայն բարձրակարգ ողնաշարավորների, այլև ստորակարգ ողնաշարավորների մոտ:

Բրոռն-Սեկարից հետո հիշյալ սինդրոմը նկարագրվել է գորտերի (Տլորկ, 1865, Սէջենով և Պաշուտին, 1885, Աղամյան, 1957), կրիաների (Աղամյան, 1950), նորածին ճագարների (Հովհաննիսյան Ա. Ա. և Միրզոյան Վ. Ս., 1956, Միրզոյան Վ. Ս., 1953), շների (Հասրաթյան Է. Զ. և Իվանովա Ս. Ն., 1950) և ուրիշ կենդանիների մոտ:

Բրոռն-Սեկարի սինդրոմի առկալությունը ճագարների վաղ հասակում թույլ է տալիս եղրակացնել, որ նրանց մոտ գենս օնտողենեղի վաղ էտապներում գոյություն ունի ողնուղեղի հաղորդող ուղիների որոշ աստիճանի տեղայինացում և մասնագիտացում:

Ինչպես տեսանք, ողնուղեղի միակողմանի կիսահատումից առաջացած խանգարումները ժամանակի ընթացքում անհետանում են և կրկին խանգարվում զիսուղեղի մեջ (ինչպես մեկ, այնպես էլ երկու) կիսադնդերի հեռացումից հետո: Անհրաժեշտ է նշել, որ այդ խանգարումները ժամանակի ընթացքում կրկին վերանում են:

Այդ փաստերը ցույց են տալիս, որ օնտողենեղի վաղ էտապներում ճագարների մոտ ֆունկցիաների ուղեղականացումն արտահայտված է թույլ ձևով, որտեղից և կարելի է եղրակացնել, որ խանգարված ֆունկցիաների վերականգնումն օնտողենեղի վաղ էտապներում տեղի է ունենում կիսադրոնական ներդայլին համակարգության ավելի ստորին բաժինների կողմից:

Մեր կողմից կատարած փորձերը թույլ են տալիս եղրակացնել՝

1. Ողնուղեղի միակողմանի կիսահատումը ճագարների մոտ, կրծքալին 11—12-րդ ողերի սահմանում առաջ են բերում շարժողական և զգացողական ֆունկցիաների որոշ խանգարումներ, որոնք 4—11 օրվա ընթացքում վերանում են և վերականգնվում են օրգանիզմի նորմալ ֆունկցիաները:

2. Ողնուղեղի միակողմանի կիսահատումը ճագարների մոտ (1—75 օրական) առաջ է բերում բրոռն-սեկարիան ֆինումների տիպիի փոփոխություն, ողնուղեղի հատման կողմում վերջավորության թույլացում և գրգռողականության բարձրացում, իսկ հակառակ կողմում՝ վերջինիս մի փոքր անկում:

Ողնուղեղի միակողմանի կիսահատումից առաջացած խանգարված ֆունկցիաների վերականգնումը համեմատարար արագ է տեղի ունենում այն ճագարների մոտ, որոնք ավելի երիտասարդ են (1—15 օրականներինը՝ 3—4 օրում, 15—17 օրականներինը՝ 6—11 օրում):

4. Ողնուղեղի կիսահատումից առաջացած խանգարված ֆունկցիաների վերականգնումից հետո առաջնալին ուղեղի հետացումը 1—75 օրական ճագարների մոտ վերականգնված ֆունկցիաների ուժները խանգարումներ (գեկոմպենսացիա) չեն առաջանում:

5. Ճագարների մոտ խանգարված ֆունկցիաների վերականգնման գործում առաջնալին ուղեղը վճռական դեր չի խաղում:

Փ. Ա. Ադամյան

ЗНАЧЕНИЕ ПЕРЕДНЕГО МОЗГА В ПРОЦЕССЕ КОМПЕНСАЦИИ НАРУШЕННЫХ ФУНКЦИЙ У КРОЛЬЧАТ В РАННЕМ ЭТАПЕ ОНТОГЕНЕЗА

Р е з ю м е

Основной целью работы было выяснение картины нарушений функций у крольчат в онтогенезе после односторонней гемисекции спинного мозга и роли переднего мозга в процессе компенсации.

Опыты ставились на крольчатах от однодневного до 75-дневного возраста.

На основании экспериментальных данных можно заключить:

1. Односторонняя гемисекция спинного мозга на уровне 11—12-го грудных позвонков вызывает ряд чувствительных и двигательных нарушений, которые через 4—11 дней проходят и нарушенные функции организма восстанавливаются.

2. Односторонняя гемисекция спинного мозга вызывает у крольчат изменения, подобные Бруон-Секарскому синдрому—на стороне гемисекции—паралич конечности, а на противоположной стороне—понижение чувствительности.

3. После односторонней гемисекции спинного мозга нарушенные функции быстрее восстанавливаются у более молодых крольчат (у 1—15-дневных крольчат в течение 3—4 дней, а у 15—17-дневных—в течение 8—11 дней).

4. После восстановления нарушенных функций удаление переднего мозга у 1—75-дневных крольчат глубоко выраженной декомпенсации не вызывает.

5. В компенсации нарушенных функций у крольчат передний мозг решающей роли не играет.

F. A. Adamian

The importance of the prosencephalon in the compensatory recovery of the disturbed functions at the early stages of ontogenesis in young rabbits

The aim of the present paper has been to study the functional disturbances in young rabbits following the hemisection of the spinal cord and the rôle of the prosencephalon in the compensatory processes.

The experiments have been carried out on young rabbits of 1–75 days' age. On the basis of the experimental data the following conclusion may be made:

1. The unilateral hemisection of the spinal cord at the level of the 11th–12th thoracic vertebrae causes a number of sensory and motor disorders. The latter are recovered in 4–11 days after the hemisection.

2. The hemisection of the spinal cord brings forth changes similar to those of the Brown-Séquard syndrome—paralysis of the limb on the side of the hemisection and a decrease in sensibility on the opposite side.

3. The functions are recovered more rapidly in younger rabbits—for rabbits 1–15 days old it was needed 3–4 days, while for rabbits 15–17 days old 8–11 days were needed for full recovery.

4. The ablation of the prosencephalon after the recovery of the functions does not cause deep decompensation in rabbits 1–75 days old.

5. The prosencephalon does not play a decisive rôle in the compensation of the disturbed functions in young rabbits.

Л И Т Е Р А Т У Р А

1. Асатрян Э. А. Физиология центральной нервной системы, 1950.
2. Адамян Ф. А. Восстановление нарушенных функций после высокой гемисекции спинного мозга у низших позвоночных животных. Автореферат диссертации. 1956.
3. Барсегян Р. О. Близкие и отдаленные последствия перерезки передней половины спинного мозга на разных стадиях постнатального онтогенеза у собаки. Научные труды Ин-та физиологии АН АрмССР, т. 3, стр. 35, 1950.
4. Мирзоян В. С. и Оганисян А. А. Последствия гемисекции спинного мозга на разных стадиях онтогенеза у кроликов. „Изв. АН АрмССР“, т. 8, № 12, стр. 83, 1955.
5. Урганджян Т. Г. Последствия перерезки передней половины спинного мозга на уровне средних грудных позвонков у щенков. Тезисы докл. совещ. по вопросу эволюционной физиологии нервной системы, Л., 1956.
6. Урганджян Т. Г. К вопросу компенсаторного приспособления у низших позвоночных животных. Тезисы докладов II Закавказского съезда физиологов, биохимиков и фармакологов. Боржоми, 1955.